ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

04.09.2012թ.
180-ի 8

ՀՀ քաղաքաշինության նախարար
պարոն Սամվել Թադեւոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թադեւոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ՀՀ քաղաքաշինության նախարարի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունները ո՞ր կազմակերպությունը կամ անձն է իրականացնում,
2. Եթե ընտրվում է անձը կամ կազմակերպությունը, ապա ի՞նչ սկզբունքով եւ ի՞նչ ժամկետով,
3. 2012թ.-ի բյուջեով որքա՞ն գումար է նախատեսվել ՀՀ քաղաքաշինության նախարարի պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար (խնդրում ենք ուտեստների և խմիչքների համար նախատեսվող գումարները ներկայացնել առանձին),
4. 2012թ.-ի հունվարի 1-ից մինչ օրս բյուջեով նախատեսված գումարից որքա՞նն է ծախսվել հյուրասիրությունների համար (խնդրում ենք ուտեստների և խմիչքների համար ծախսված գումարները ներկայացնել առանձին):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան